

## Փնտռել, հարցազրոյց ունենալ և գործի առնել մատակարարը

### Մատակարար գտնել

Մատակարար գործի առնելը շատ կարևոր գործ մըն է, և դուք պէտք է ժամանակ տաք գտնելու ճիշդ անձը:

Իբրև գործատեր դուք կրնաք գործի առնել որևէ մէկը, որ կ'ամբողջացնէ ձեր պահանջքները: Ան կրնայ ըլլալ ընտանիքի անդամ, ընկեր կամ որևէ մէկը, որ կը յանձնարարուի Հանրային Իշխանութեան Գրանցամատեանէն: Մատակարար գտնելու ուրիշ ձևերէն կրնայ ըլլալ ձեր եկեղեցին, թռուցիկներ բաժնել, տեղական թերթերուն մէջ յայտարարութիւն դնել կամ պարզապէս բերնէ բերան լուր տարածել:

Յիշեցէք զգոյշ ըլլալ այդ ընթացքին ձեր մասին տուած անձնական տեղեկութիւններուն շուրջ: Ձեր տունին հասցէն երբէք մի դնէք թռուցիկներու վրայ: Եթէ դուք մատակարար չգտնէք, օգնութեան համար կապ հաստատէք ձեր քաունթիի IHSS-ի գրասենեակի կամ Հանրային Իշխանութեան հետ:

### Մատակարարներու հետ հարցազրոյց

Նախքան մատակարարի հետ հարցազրոյց ունենալը, դուք պէտք է ժամանակ տաք վերանայելու ձեզի համար լիազօրուած ծառայութիւնները և անոնցմէ իւրաքանչիւրին համար լիազօրուած ժամանակը: Եթէ դուք զգաք, որ մէկ մատակարար առանձին չի կրնար մատուցել ձեզի պէտք եղած բոլոր ծառայութիւնները կամ աշխատիլ լազօրուած բոլոր ժամերը, ապա դուք մէկէ աւելի մատակարար պիտի վարձէք: Եթէ դուք յատուկ կարիքներ ունիք, ինչպէս յատուկ սննդականոն կամ ծանրութիւն

շալկելու կարողութիւն ունեցողներ գտնել, հարցազրոյցի ատեն պէտք է անպայման նշէք ատոնք:

Հետևեալ քայլերը կրնաք օգտակար գտնել.

1. Դիմողներուն հետ հեռաձայնով հարցազրոյց ունեցէք:
2. Հանդիպեցէք ամենազօրաւոր թեկնածուներուն հետ:
3. Ստուգեցէք յանձնարարականները:



### Հեռաձայնով հարցազրոյց

Այդ հարցազրոյցի ընթացքին դուք պէտք է բաւական լաւ կարծիք կազմէք անձը վարձելու առկայ հնարաւորութեան մասին, անոր ունեցած փորձառութեան եւ պահանջուած աշխատանքները կատարելու կարողութեան մասին: Ասիկա նոյն ատեն յարմար ժամանակն է տեղեկացնելու, որ IHSS-ի մատակարարները պէտք է ներկայ ըլլան մատակարարի կողմնորոշման, պէտք է մատնահետք տան և քրեական անցեալը ստուգեն: Եթէ դուք գոհ էք այդ անձէն, յաջորդ քայլը պիտի ըլլայ անոր հետ հանդիպելու համար ժամադրութիւն որոշել՝ որպէսզի քննարկէք ձեր կարիքները և լիազօրուած ծառայութիւնները, ինչպէս նաև զիրենք աւելի լաւ ճանչնաք:

## Դէմ առ դէմ հարցազրոյց

Այդ հարցազրոյցը կրնայ տեղի ունենալ ձեր տունը կամ որևէ հանրային մօտ վայրի մը մէջ: Նկատի ունեցէ՛ք խնդրել բարեկամէ մը կամ ընտանիքի անդամէ մը ներկայ գտնուելու, այնպէս որ անոնք կարենան օգնել հարցազրոյցին և օգնել ձեզի ընտրելու, թէ որո՞ւ վարձէք: Եթէ հնարաւոր է, լաւ գաղափար է մէկէ աւելի հարցազրոյց ունենալ: Հարցազրոյցի ընթացքին առէք նօթեր, որոնց կրնաք անդրադառնալ հետագային, Յանձնարարականները քննարկելու կամ թեկնածու ընտրելու որոշումը կայացնելու ատեն: Ահաւասիկ հարցազրոյցի ընթացքին քննարկելու քանի մը յաւելեալ խորհուրդներ.

- Ինքնութեան փաստաթուղթ պահանջեցէ՛ք: Ատիկա կրնայ Քալիֆորնիոյ ի զօրու վարորդական իրաւունք ըլլալ կամ նկարով անձնաթուղթ:
- Բացատրեցէ՛ք աշխատանքը կատարելու ձեր ակնկալութիւնները՝ ներառեալ ձեր առարկաները՝ գործածելը, գալու և երթալու ժամերը, ինչպէս նաև ուրիշ տեղեկութիւններ, զորս գիտնալը ձեր գործի առած անձին համար կարևոր պիտի ըլլան:
- Ձեզի համար լիազօրուած ծառայութիւններուն և ժամերուն վրայէն անցէ՛ք:
- Հարցուցէ՛ք, եթէ անոնք նախապէս IHSS-ի մատակարար աշխատած են, թէ ոչ, և եթէ անոնք անցած են մատակարարի անդամագրութեան ընթացքը՝ ներառեալ մատնահետք տալը:

- Առիթ տուէ՛ք անոնց՝ գործին և ձեզի համար հարկաւոր ծառայութիւններուն մասին հարցումներ հարցնելու:

## Քննարկել մատակարարի Յանձնարարականները

Յանձնարարականները քննարկելը ձեզի կը տրամադրէ կարևոր տեղեկութիւն այն անձին մասին, զոր կը մտածէք գործի առնել: Յանձնարարողներուն հետ հեռաձայնելու ատեն այնպիսի հարցումներ հարցուցէ՛ք, որ գաղափար մը կազմէք, թէ անոնք ինչ տեսակ գործ ըրած են, որքան աշխատած են, վստահելի ըլլալը և անոնց տկարութիւններուն և զօրութիւններուն մասին: Յանձնարարողներուն ըսածներէն նօթեր առէ՛ք, որովհետև ատոնք կրնան ձեզի օգնել որոշելու, թէ որուն գործի առնէք:

## Որոշում առնել

Նայեցէ՛ք ձեր նօթերը և համեմատեցէ՛ք ձեր հարցազրոյց ըրած իւրաքանչիւր անձին զօրութիւնները, որակաւորումը և որոշեցէ՛ք այն անձը, որ լաւագոյն ձևով կ'ամբողջացնէ ձեր պէտքերը: Անգամ մը որ ձեր որոշումը առնէք, տեղեակ պահեցէ՛ք անձը և ապա կապ պահեցէ՛ք ձեր քաունթիի IHSS-ի գրասենեակին հետ, այնպէս որ ձեր մատակարարը կարենայ սկսիլ անդամագրութեան ընթացքը, եթէ նախօրօք արդէն ըած չէ այդ:

